Մրցույթ՝ ՀՀ ‹‹ Լոռու մարզի Վանաձորի թիվ 18 միջնակարգ դպրոց›› ՊՈԱԿ-ի դասվարի (23 դասաժամ-ռուսերենով ուսուցմամբ դասարաններում), ռուսաց լեզվի և գրականության (8 դասաժամ -ռուսերենով ուսուցմամբ դասարաններում), անգլերենի (4 դասաժամ), քիմիայի (4 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի :
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝
-դիմում (ձև 1),
-մեկ լուսանկար 3 x 4 չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-‹‹ Հանրակրթության մասին ›› ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 07 -ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր ՝ ժամը 10:00 –ից - 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2024թ. հոկտեմբերի 22-ին ՝ ժամը 12:00-ին ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 18 դպրոցում : Հասցեն՝ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Երևանյան խճ.151:
Տեղեկությունների համար զանգահարել (0322)3-78-09 հեռախոսահամարով: